Գարեգին Նժդեհ
“Որդիների պայքարը հայրերի դեմ”

“Անդունդի եզերքին” - Գլուխ Ա

Մի ժողովուրդ, որի որոշ տարրերը կարծես արդեն հաշտվել են իրենց ցեղի գլխովին կորչելու մտքի հետ և ցուցադրում են մահվան դատապարտվածի հոգեբանություն:

Ոմանք հուսահատորեն իրենց կյանքի և հայրենիքի վերջին փրկությունը տեսնում են դատարկամիտ արտահայտությունների և հայտարարությունների մեջ: Դժբախտաբար, մեծաթիվ հայեր, խոսքով զոհելով իրենց հայրենիքը, նվաստացնելով նրա գոյությունը, չեն էլ գիտակցում, թե ինչպիսի մեծ հարված են հասցնում նույն իրենց հեղինակությանն ու արժանապատվությանը:

Կան և այնպիսիները, որոնք ուզում են և՛ անկախ հայրենիք ունենալ, և՛ վաղը պարտված տեսնել արտաքին թշնամուն, բայց նախապատրաստվելու փոխարեն խոսում են ու գրում միայն:

Անկողնային դիվանագետներն ու ֆեյսբուքյան քաղաքագետներն այսօր անպակաս են: Գործի փոխարինողը կարծես դարձել է աննպատակ, բայց լավ մշակված խոսքը:

Գողգոթաների տե՛ր ժողովուրդ, որ չի սարսափում իր ողբերգանքի մեջ տկար և ծիծաղելի լինելուց:

Շատերը ծաղրում են Հայաստանը՝ համեմատելով այն աշխարհի ամենաթերզարգացած երկրների հետ կամ նույնիսկ համարելով դրանցից մեկը: Բայց երբ բախտ վիճարկվի հայտնվել առավել դժբախտ, անհույս ու անկարգ երկրում, ապա այնտեղ հույսն արթնանում է, և հայերը մտածում են, որ վաղ թե ուշ այդ պետությունը ոտքի կկանգնի: Այն ինչ, երբեք չեն ասի իրենց երկրի համար: Ապրելով սին ու անիրականալի անուրջների դարում՝ հայերի մի ստվար շերտ կարծես թե իր սեփական երկիրը նվազ է սիրում, քան թե պատմականը,

որում իր կյանքի ընթացքում երբեք չի ապրել, և որի շուրջ բանավեճը կորցրել է իր արդիականությունը դարեր առաջ: Եվ ըստ էության՝ հասկանալի է, թե ինչու են շատերը աղմկում և գոչում, որ մեզ անկախ հայրենիք պետք չէ: Հայկական սոցիալ-հոգեբանության գլխավոր թերություններից է ստրկամտության վարվելակերպի ընդունումը:

Դժբախտություն է, սակայն, երբ դաստիարակիչն ինքը ևս կարիք ունի դաստիարակության:

Այո, մեր դարում դաստիարակություն չունեցողները դաստիարակում են մատաղ սերնդին:

Հեռուներից խոսեցին Հայաստանի մասին՝ առանց այդ յոթնիցս սուրբ և հերոսական երկիրը ճանաչած լինելու:

Ծանոթ չլինելով բացարձակապես տիրող իրավիճակին՝ շատուշատ հայրենակիցներ իրենց թույլ են տալիս գնահատականներ տալ և բացի այդ՝ դրանք պարտադրել: Սիրում են հեռվից քննադատել, բողոքել, դժգոհել, ծաղրել ու ոտնահարել, բայց երբեք չեն ցանկանա նույնիսկ կես տարի ապրել իրենց “հարազատ” ու “բնօրրան” երկրում:

Դասեր սույն գլխից.

1. Հայրերի վերադաստիարակիչը հարկադրաբար հայ երիտասարդությունը պետք է լինի:
2. Ամոթով երես դարձնել այն անիմաստ կյանքից, որ քարշ են տալիս կեղծապաշտ հայրերը:
3. Մեզ պետք է հոգեփոխվել, օրվա հայրերի երեսին շպրտել վճռական “ոչ”-ն ու հիմնել սեփական ուխտը:
4. Պիտի դառնանք հակապատկերը մեր հայրերի:
5. Միայն գերիշխանությամբ են ժողովուրդներն արդարացնում իրենց գոյության իրավունքը:

“Կեղծիքի գերությունը” - Գլուխ Բ

Հույսը, թե ահա՛, կերևան եվրոպական գայլերը, և իսլամ շունը կթողնի, կհեռանա հայկական նահանգներից, թե, ահա՛, կհայտնվեն քրիստոնյա զորքերը, և հայությունը կթոթափի դարերի ստրկության լուծը:

Հայերի մի մասն այդպես էլ չհասկացավ, որ ո՛չ հյուսիսն է մեր լավը ցանկանում, ո՛չ էլ արևմուտքն ու արևելքը: Ոչ ոք բացի մեզնից: Կարծում են, թե միակ ու ճշմարիտ լուծումը որևէ կողմի քողի տակ մտնելն է: Դա անկախությունից կամովին հրաժարվելու քայլ է՝ հակապետական որակվող: Հայերը միշտ իրենց հույսը դրել են ուրիշների վրա՝ կարծելով, թե ահա էս ինչը կգա մեզ կփրկի և մենք լավ կապրենք: Եվ երբ բախվել են իրականությանը, այսինքն՝ բառացիորեն դիմացինի “դավաճանությանը” ակամայից զարթնել են կարծես ու սկսել մեղադրական տեղատարափը: Բայց չեն մտածել, որ գլխավոր մեղավորն ու պատասխանատուն հենց իրենք են եղել՝ իրենց պարզունակ մտածողության և մարտավարության պատճառով: Նման օրինակները բազում են, 44-օրյա պատերազմից մինչև ռուս-պարսկական պատերազմ՝ նկարագրված այս գրքում:

Եվ սովորություն կա, գրչի ու գրքիտեր բոլոր ժողովուրդների մոտ, իմաստուն սովորություն կա պատերազմից հետո հաշվի նստել, պարզել իրենց հաջողության և պարտության պատճառները:

Այսպես են տարբերվում իմաստուն և կշռադատող ժողովուրդները, այլ ոչ թե կարծրատիպային ու մակերեսային մտածողությամբ մարդկանց խմբերը, որոնք նպատակուղղված ոմանց կամքն (նույնիսկ՝ պահանջը) են ի կատար ածում:

Կարծիք հայտնեց մտավորականը, սրճեփը, դիվանագիտական մարզանքներով զբաղվողը, նպարավաճառը, սափրիչը, չմնաց արհեստ և արվեստ, որի ներկայացուցիչը լեզու չթրջեր Կարսի պատերի տակ հայ զենքի կրած անհաջողության պատճառների մասին, բայց ոչ ոք ձեռնահասություն և արիություն չունեցավ՝ մազաչափ անգամ մոտենալու ճշմարտության, ոչ ոք չուզեց և չկարողացավ տեսնել ճշմարտությունը:

Այսպես է նաև մերօրյա իրականության մեջ: Կարսի անկման պատճառները քննարկող և իրողությունները քննող հասարակությունը ոչ մի ձևով չի տարբերվում այսօրվա հասարակությունից, որը մինչև հիմա ընդհանուր հայտարարի չի եկել: Գիտեք, կարծիք հայտնելը մեկ բան է, այն հիմնավորելը՝ լրիվ այլ: Բայց երբ բախվում են իրարամերժ կարծիքներն ու դրանք արդարացնելու և հիմնավորելու անհույս փորձերը, երկխոսությունն ու բանավեճն իմաստազրկվում է: Մարդը, եթե գլուխ չի հանում որևէ թեմայից, երբեք ու երբեք չպիտի մտնի դրա քննարկումների մեջ՝ ծաղրուծանակի առարկա չդառնալու համար: Մեկ-մեկ ժողովրդի տարրերի կողմից հնչեցվող այնպիսի ուշագրավ ու հետաքրքրաշարժ զարգացման սցենարների ենք ականատես լինում, որ ակամա սկսում ենք նաև այլմոլորակայիններին հավատալ:

Ոչ ոք նույնիսկ այս օրհասական վիճակում չի ցանկանում նայել ուղիղ ճշմարտության աչքերին: Ինչո՞ւ, որովհետև գիտի, որ այն սարսափելի է ու նվաստացուցիչ: Դրա համար էլ մենք առաջնորդվում ենք սին ցանկություններով՝ ձգտելով քողարկել ու ամեն ձև թաքցնել ճշմարտությունը՝ հետագա վատ հետևանքներից խուսափելու համար: Ձգտում ենք տեսնել լավը՝ մտածելով, որ ապագայում լավ կլինի, եթե այդպես դիտենք: Խաբուսիկ մոտեցում է: Բայց եթե ճշմարտությունը գիտենայինք հենց սկզբից, միգուցեև այսօր նման վիճակ չունենայինք:

Այս հարցին հենց Նժդեհն է լավ պատասխանել. *Ընդունել ճշմարտությունը հանրապետական բանակի անհաջողության մասին, պարզել Կարսի անկման իսկական պատճառները, կնշանակի պատասխանատվության բաժին ընդունել:* Գաղտնիք չէ, որ հայերը սիրում են բոլորին մեղադրել, այն ինչ վախենում են մեղավոր լինելուց, ինչ որն իրականություն է (և ոչ միայն հայերը): *Չկա՛, ճշմարտություն չկա՛ մեր կյանքում, և դրա համար էլ այնքան անլույս ու անհույս է մեր կյանքը, դրա համար էլ այնքա՛ն տգեղ են մեր բարքերը, այնքա՛ն խոպան մեր հոգիները:*

Տե՛ս, հայրերդ իրար ավելի են ատում, քան արտաքին թշնամուն:

Միանգամայն ճիշտ միտք է, քանզի սրա ապացույցին ամեն օր ականատես ենք լինում: Մարդիկ միմյանց հետ կռվում են, միմյանց սպանում ու հալածում, ազգամիջյան պառակտում մտցնում՝ այդպես խաթարելով և՛ ներքին կայունությունը, և՛ արտաքինը որոշ չափով: Մարդիկ սկսել են ատել միմյանց ավելի շատ: Չեն սիրում, նախանձում են, ուրիշների հաջողության վրա անեծք դնում, անդուլ-անդադար անիծում: Այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ ընդհարումներ են տեղի ունենում պարզապես տեղի ունենալու համար:

Այսպիսին է այսօրվա մտածելակերպը. ով ինչքան մեծ գրպաններ ունի, նա է տերը, իսկ ով մեծ սիրտ՝ անժամանակ ստրուկը:

Յովտ գրի մասին ավելի են աղմկում, քան հայ ժողովրդի վտանգված ապագայի:

Եվս մի շատ արդիական թեմա. հայերը ընդմիշտ կքննարկեն Ուկրաինա պետության գոյության համար անհրաժեշտ հիմքերի ու նախադրյալների առկայության հարցը, ռուսական գրավված տարածքների զարգացման ֆինանսական միջոցների հայթայթման հարցերը, Կասպից ծովի օգտակար հանածոների տեղափոխման մեթոդները հեռավոր Ճապոնիա, բայց երբեք չեն ցանկանա կենտրոնանալ լոկալ խնդիրների լուծման վրա:

Դասեր սույն գլխից.

1. Հա՛յ երիտասարդ, դու ճշմարտությամբ աննհանաջ կռիվ պիտի տաս կեղծիքի դեմ, կռվի պիտի դուրս գաս տգիտության և վատության դեմ:
2. Պիտի մեռնի կեղծիքը, որ ապրի մեր ժողովուրդը:

“Կեղծիքը զինաթափած ժողովուրդը” - Գլուխ Գ

Կբացվեն աչքերը, և նրանք, որոնք բաց աչքերով էին ապրում աշխարհում, բայց չէին տեսնում, իրերը և երևույթները, տեսնել ու հասկանալ կսկսեն իրենց ճշմարիտ լույսի մեջ:

Մեր աշխարհում շատ են այն մարդիկ, ովքեր տեսնելով անարդարությունը, կամ վախից, կամ անհանգստությունից, կամ դրան հետևող վատ հետևանքներից սարսափելով, չեն արտահայտվում, պահում են իրենց մեջ և առաջնորդվում կեղծ թեզերով: Կոպիտ ասած՝ աչք են փակում իրականության վրա՝ ճշմարտությունը բացահայտ ասելուց հետո բացասական ապրումներ չունենալու նպատակով:

Դասեր սույն գլխից.

1. Դպրոցը կդառնա ազգային ոգու և ուխտի դպրոց, մամուլը՝ լույս և ջերմություն սփռող, Կինը՝ ընկերն ու օգնականը և ոչ աղախինը տղամարդու:
2. Դու արժանի կլինես, հա՛յ երիտասարդություն, Մեծ Հայրենիքին, եթե հոգեփոխվես և ժողովրդիդ հոգեփոխես:

“Նախ մարդ” - Գլուխ Դ

Կյանքի խորհուրդը կայանում է հոգևոր և ոչ թե նյութական շինարարության մեջ:

Կյանքն այնքանով է արժանի լինում, և նրա իմաստն այնքանով է արդարացվում, եթե մարդը կարողանում է ինքնաճանաչողությամբ և սեփական ուժեղ կողմերը ճիշտ օգտագործելով կառուցել ավելի բարեկեցիկ կյանք, ավելի տոկուն հոգի: Նյութապաշտ ժողովուրդները, ինչպես պնդում է հեղինակը, կարճատև կյանք են ունենում և բաղձալի հաղթանակներին չեն հասնում: Ուստի ճիշտ է, որ կյանքի խորհուրդը հոգևոր շինարարության մեջ է, նախ՝ մեր, ապա և մեր ժողովրդի:

Միևնույն մարդու մեջ չեն ապրում միաժամանակ ստրկամիտն ու ազատատենչը: Նա կամ մեկն է կամ մյուսը:

Միևնույն մարդը միգուցեև կարողանա ապրել երկու իրարամերժ ծայրահեղություններով, բայց երբեք չի կարողանա դրանք հեշտորեն փոխել կամ դրանց հեշտորեն սովորել: Մարդ պիտի լինի կա՛մ ազատատենչ, կա՛մ

ստրկամիտ: Իսկ ընտրությունը կախված է մարդու հոգեբանական վիճակից, կարգավիճակից, մտածելակերպից, խնդիրներից, վերափոխվելու վճռականության աստիճանից և այլ գործոններից:

Ապրի՛ր չմեռնելու, մեռի՛ր ապրելու համար:

Ապրի՛ր այնպես, որ հանկարծ ու հանկարծ չմեռնես, այսինքն՝ հոգեպես չկործանվես, միշտ նախաձեռնող ու ստեղծագործ լինես, քո նյութական ու վերացական արժեքներով ապրեցնել տաս քեզ: Եվ մեռի՛ր՝ վստահ լինելով, որ թողած ժառանգությունդ միշտ քեզ ապրեցնելու է:

Դասեր սույն գլխից.

1. Եղի՛ր իդեալիստ, երիտասա՛րդ ընթերցող, քանզի նյութապաշտը դառնում է մարդ - մեքենա, կոկորդ ու ստամոքս միայն, իսկ նմանը և՛ ապրում է, և՛ չի ապրում, իսկ նմանը ավելի անասուն է, քան մարդ:
2. Եղի՛ր ընդունակ ինքնանորոգումի ճամփով սատար հանդիսանալ հասարակության բարոյական վերանորոգմանը՝ խորապես գիտակցելով, թե միակ մարդը, որին կարող ես բարձրացնել, ինքդ ես:
3. Դու պիտ չճանաչես երջանիկ լինելու մի այլ միջոց, քան ցեղիդ և նմաններիդ համար աշխատելն ու տառապելը:
4. Դու, սակայն, պիտ լինես անձնական երջանկությունը չճանաչող սերունդ:

“Ինքնաճանաչություն” - Գլուխ Ե

Անհուսորեն տգետները միայն չգիտեն այսօր, որ չօգտագործվող ուժերի մի հսկայական պահեստ է մարդս, որից դժբախտաբար կարողանում են օգտվել քչերը միայն:

Բազմաթիվ մարդիկ, կասկածելով ու վստահ չլինելով իրենց վրա, հաճախ անտեսում են իրենց մեջ թաքնված մտավոր ու ֆիզիկական ներուժն ու այն չեն օգտագործում ըստ արժանվույնս: Հետևապես, կարևոր է, երբ մարդը ճանաչելով

իրեն և իր յուրահատկությունները, փորձում է առավելապես օգտագործել, գործի դնել իր ուժերը՝ վեհ նպատակներին հասնելու համար: Հիրավի, մարդը չօգտագործվող ուժերի մի հսկայական պահեստ է, և այդ պահեստի բացման համար պահանջվում է ընդամենը մեկ բանալի. դա կարող է լինել մարդուն "ինքնարթեցնելը" կամ "վերադաստիարակելը": Անվանեք այն, ինչպես ուզում եք:

Մարդս այն է, ինչ որ կամ ինչպես որ մտածում է իր մասին:

Հետաքրքիր մի ուրիշ ասույթ էլ կա. քեզ ընդունիր որպես թագավոր, և շուրջբոլորը քեզ կնայեն իբրև թագավորի: Հետևաբար, մարդն այն է, ինչն ինքն իր մեջ պատկերում է, այնպես ինչպես իրեն զգում է և մյուսներին ի ցույց դնում: Եվ հավատացնում եմ, դա փոխելն իսկապես հեշտ է, պարզապես պետք է կամքի ուժ և պատասխանատվության զգացում ունենալ՝ հետագայում չարաչար չզղջալու համար:

Հեռո՛ւ և հոգով ծույլերից, որոնք ճշմարտությունները, սկզբունքները և սրբությունները սրբապղծորեն կիջեցնեն մինչև իրենց տափակ հասկացողության աստիճանը:

Ապացուցված է, որ եթե անհատը հարաբերվում է անհաջողակ, մշտապես տրտում ու դժկամ, անտրամադիր ու հավերժ բողոքող մարդկանց հետ, սկսում է նմանվել նրանց: Եվ կա սրա հակառակ ծայրահեղությունը. եթե շփվում է բարի, խելացի, զարգացածների հետ, սկսում է աշխարհը տեսնել իրենց պես: Ուստի, մտահոգեպես ավելի լավը դառնալու համար պետք է շփվել համապատասխան մարդկանց հետ:

Դասեր սույն գլխից.

1. Կուզեի, որ դու, հա՛յ երիտասարդ, որ դու յուրացնեիր ինքնաճանաչությունը՝ որպես ուժի, հաղթանակի և բարձր երջանկության ամենակարճ և ամենաստույգ ճամփան:
2. Ծանի՛ր ինքդ քեզ:
3. Ուրեմն, եղի՛ր ինքնաճանաչ, երիտասա՛րդ բարեկամ, հավատա՛ թաքուն ուժերիդ, օգնության կանչի՛ր քո ներքին մարդուն:

4. Եղի՛ր անկախ հոգեպես:
5. Աշխարհը և երևույթները մի՛ դիտեր ուրիշի աչքերով:
6. Եվ երբեք քեզ կատարյալ մի՛ համարիր, որ չդանդաղի վերելքդ:
7. Սիրի՛ր վեհը, գեղեցիկը և հերոսականը նույնիսկ թշնամիներիդ մեջ:
8. Մի՛ գարշիր հասարակությունից, բայց հաճախ գերադասիր իմաստուն մենությունը:
9. Մարդկանց մի՛ նայիր վերևից, դա հեղինակություն չէ: Տկարն է ձգտում հաճոյանալ ամբոխին, արժանանալ փողոցի ուշադրությանը:

“Պատճառ և հետևանք” - Գլուխ Զ

Դասեր սույն գլխից.

1. Մի՛ լինիր ստվերը, արձագանքը, նմանությունը ուրիշների, որ հարկադրված չլինես ծիծաղելիորեն կրելու այլոց գաղափարներն ու տեսակետները...
2. Հսկի՛ր մտածումներիդ մաքրության ու վսեմության վրա: Հաճախ «քաղհանք»-ի ենթարկի՛ր մտքերդ, զտի՛ր:
3. Սովորի՛ր ղեկավարել ուղեղդ:
4. Մարդս տառապում է իր անկատարելությունից, որ արդյունք է իր անմաքուր, իր «ժանգոտ» մտածումների:
5. Սովորի՛ր իմաստնորեն ղեկավարել նախ սեփական մտածումներդ ու ցանկություններդ:

“Անբարոյավետ խոսքը” - Գլուխ Է

Մարդս իր խոսքի մեջ դրսևորում է իր հոգու բովանդակությունը:

Մարդն այն է, ինչ ցույց է տալիս: Եթե ցանկանում ենք մարդուն ճանաչել, ապա դիտելով ու լսելով նրա խոսքը, կարելի է իրականությանը մոտ պատկերացում

կազմել նրա անձնավորության մասին: Այն ինչ նա արտահայտում է իր հոգու թելադրանքն է ու պատկերը:

Կարծեք՝ անհրաժեշտ է դաստիարակելու համար խոսքը լինի բարձր և հայհոյալից, որ կարողանան ընթերցողին խաբել, թե իրենք արդար են, ուժեղ, հեղինակավոր:

Շատուշատ գործիչներ հենց այս մեթոդն են օգտագործում՝ իրենց նպատակներին, այն է՝ հասարակության վրա իշխելուն հասնելու համար: Ուշագրավ է, բայց մերօրյա հասարակության մի ստվար զանգված նախընտրում է հայհոյալից, պարսավանքով լի խոսք՝ կրթված, գրագետ ու սիրուն խոսքի փոխարեն:

Բանակռվողներին ցավագինորեն պակասում է տարրական բարեկրթություն, պարկեշտություն, արդարախոհություն:

Սույն ասվածքի վառ օրինակներից են հանրության մեջ շրջանառվող բանավեճերը, որոնք աստիճանաբար վերածվում են լեզվակռիվների, և որոշ դեպքերում՝ նաև կռիվների:

Պատերազմող կողմերի համար գոյություն ունեն զինադադարը, հաշտությունը, իսկ մեր կյանքում՝ անվերջ իրարակերություն:

Սրա դառը հետևանքները մենք մեր առօրյա կյանքում տեսնում ենք: Հասարակությունը պառակտման տանող հուսալի ճանապարհներից է իրարակերությունը, որը շատ դեպքերում միգուցե հրահրվում է: Իրարակերությունը բարդ ժամանակաշրջաններում հեշտ պայմաններ է ստեղծում արտաքին թշնամիների համար՝ հարձակում նախապատրաստելու:

Մենք չենք ներում իրար, որովհետև ստրուկին հատուկ հոգեբանությամբ ներում ենք արտաքին թշնամիներին:

Սա ևս ընդգված բնորոշիչն է մեր ժողովրդի. չենք ներում միմյանց, բայց արտաքին թշնամիներին ներում ենք առանց երկմտելու:

Քո ժողովուրդի մի մասը միայն որպես Հայ և մարդ կատարեց իր պարտականությունը և այսօր հավասարապես կտառապի մյուս մասի տկարության և անպարտաճանաչության երեսից:

Այո, “մեկը բոլորի համար, և բոլորը մեկի համար” սկզբունքն այստեղ լիովին գործում է: Հետևապես, վատ սցենարներից խուսափելու համար, պետք է վերադաստիարակել հասարակությանը՝ իրենց բացատրելով, որ ամեն մեկն իր կատարածի կամ չկատարածի համար պատասխանատու է:

«Հոգևոր եղբայրներ են մի ժողովրդի անդամները: Եվ որպեսզի համերաշխություն տիրի եղբայրների միջև, անհրաժեշտ է, որ ամեն մեկը որոշ բաներ մոռացության տա և մտահոգվի միայն ամենաէականով»:

Պատահական չէ, որ ազգ բնորոշումը տալիս են միևնույն տարածաշրջանում ծնված, ապրած, մեկմեկու հետ փոխգործակցած անհատներին: Սա նշանակում է, որ յուրաքանչյուր պարագայում, թե՛ աշխարհայացքով, թե՛ մտածելակերպով, թե՛ համոզմունքներով պայմանավորված, մի ազգի ներկայացուցիչներն իրար հետ փոխկապակցված անձինք են: Ուստի, ընդհանուր համերաշխությանը հասնելու և արտաքին թշնամուն վերացնելու լավագույն միջոցն անձնական շահի զոհաբերությունն է ընդհանուր շահի համար: Մեզնից ամեն մեկը պիտի հաշտվի այն մտքի հետ, որ վաղ թե ուշ մի բան զոհաբերելու է հանուն արդարության և ապագայի:

Դասեր սուն գլխից.

1. Խուսափի՛ր վայրաբանությունից:
2. Ազնվացրո՛ւ լեզուդ, խոսքդ, իսկ այդ անելու համար, նախ ազնվացրո՛ւ մտավոր կյանքդ:
3. Թույլ մի՛ տուր, որ «անկոչ հյուրերը» տեղ գրավեն ուղեղիդ մեջ:
4. Եղի՛ր ճշմարտության քարոզիչը:
5. Դարձի՛ր կենդանի արձագանքը ճակատագրի մարգարեի...

“Արիադավան ժողովուրդ” - Գլուխ Ը

Ժողովուրդ, պետություն, անհատ. սրանց իրավունք է տրվում ապրելու և ապրում են, երբ պատրաստ են ամեն վայրկյան ապացուցելու, թե գիտեն մահվամբ պաշտպանել իրենց գոյության իրավունքը:

Ըստ Նժդեհի՝ Մարդու կյանքը դառնում է անիմաստ և աննպատակ, եթե վերջինս հանկարծ պատուհասած վտանգի պատճառով իր խափանված հայրենի եզերքի պաշտպանության համար չի զոհաբերի սեփական կյանքը: Նույն ձև, եթե չի զոհաբերի սեփական անձն ու կյանքն իր ստեղծած նյութական և հոգևոր արժեքների համար, որոնք ծառայում են հայրենիքին ու ժողովրդին:

Անմտություն չէ՞ և՛ ոչխար լինել, և՛ գանգատվել գայլերից:

Մարդն ինքն է որոշում լինել ոչխար, թե գայլ: Հոգեբանական տեսանկյունից՝ այդ երկու կենդանիների միջև տարբերությունն այն է, որ գայլ դառնալ ցանկացողը պատրաստ է վերափոխվել ու վերափոխել իր շրջապատը, իսկ ոչխարը մնալու է նույն բազմակի օգտագործման առարկան: Ուստի, գայլ դառնալը ևս արիության նշան է:

Բախտը ժպտում է խիզախներին:

Խիզախներն են ստեղծում բախտը. եթե նրանց ամեն մի ձեռնարկություն՝ արիության, քաջության, վճռականության ու համարձակության շնորհիվ պսակվում է հաջողությամբ, բախտը դառնում է օրինաչափություն:

Դասեր սույն գլխից.

1. Հա՛յ երիտասարդություն, պիտի կարողանա՞ս արտաքին վտանգի ժամանակ ձեռքդ խղճիդ գոչել. «Ես քո կենդանի սուրն եմ, Հայրենի՛ք, որ քեզ հաղթություն պիտի բերի»: Պիտի չկարողանա՞ս, ի զուր ես ապրում: Պիտի չարիանա՞ս, վա՛յ քո ժողովրդին...

“Հայրենիք և հայրենասիրություն” - Գլուխ Թ

. . . Ժողովուրդները նախ և առաջ իրենց ամենաընտիր որդիների արյունով են սրբում իրենց երկիրը և ապա այդ սրբացած հողի վրա բարձրացնում շենքն իրենց անկախության:

Մի երկրի սահմանները գծվում են ժողովրդի միջի անձնազոհ ու նվիրված արի զինվորների արյամբ և ամրանում նույն ժողովրդի մյուս ներկայացուցիչների քրտնաջան աշխատանքով: Սա ոսկե կանոն է:

Ինչպիսի՞ Հայրենիք կունենանք վաղը:
Ինչպիսին որ կառուցվում է այսօր մեր մտքի և հոգու մեջ: Երբ որ մեր սիրտը և ուղեղը լցնողը ապառաժահիմն ու հաղթական հայրենիքի գաղափարն է, վաղվա Հայաստանը չի կարող ավազահիմն, ապազոր և դժբախտ լինել:

Վաղը կունենանք հզոր, ինքնիշխան, ազատ ու զարգացած հայրենիք, եթե ժողովրդի ամեն մի մասնիկ մտածի ընդհանուր շահի մասին: Եթե նույնիսկ փոքր զանգված զբաղվում է իրարակերությամբ, հաճոյանում նյութապես մեծերին ու հեղինակավորներին, նրանց՝ ժողովրդի մնացյալ հատվածին թունավորելու և իրենց “ջրերը գցելու” շանսերը բազմապատկվում են: Եթե փոքր մասը մտածում է, թե այսինչ դժբախտ, անապագա, աննպատակ ու ողբալի երկրում ենք ապրում, այդ թույնը տարածվում է հասարակության մյուս շերտերի մեջ ահավոր արագ, և մարդկանց վերաբերմունքն ու աշխարհընկալումն աստիճանաբար փոխվում են դեպի վատը: Իսկ այսօր նման վիճակ, դժբախտաբար, տեսնում ենք. . . Մարդիկ սիրում են գովել ուրիշ երկրները, հավերժ խոսել նրանց զարգացվածության մակարդակի և ձեռքբերումների մասին, բայց պատեհ-անպատեհ “ոտքի տակ” են գցում սեփական ոչ պակաս ստեղծագործ ու աշխարհին մի շարք հանճարներ նվիրած երկրին:

- Վաղը պիտ անասնանան ու կործանվեն այն ժողովուրդները, որոնց որդիներն այսօր ուսումնասիրում են իրենց պատմությունը Մարքսից կամ Լենինից և ոչ իրենց նախահայրերից սկսած:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս կա հայոց ու համաշխարհային պատմության բազմակողմանի ու օբյեկտիվ առավել խորն ուսումնասիրման անհրաժեշտություն, հայությունը պետք է հաշտվի այն մտքի հետ, որ իր պատմությունն ավելի է, քան իրեն ներկայացվում է, և որ ինքն է այսօրվա պատմության կերտողն ու գրողը: Մարքսից կամ Լենինից կամ մյուսներից սկսված պատմությունը երբևիցե չի կարող ներկայացնել հայության սկզբնավորման, ծագման, զարգացման փուլերը, քանզի այն ամենապարզ պատճառով կիսատ է և կողմնակալ: Եվ այդպես գրեթե բոլոր հանրահայտ գրողների, պատմագիրների դեպքում:

Դասեր սույն գլխից.

1. Անկախությունը, անկախ Հայրենիքը, ինչպես տեսնում ես, հա՛յ երիտասարդ, իրավունք լինելուց զատ և պարտականություն է, որից խուսափող ժողովուրդները կորցնում են իրենց բարոյական գոյության իրավունքը:

“Չարարվեստ տականքները” - Գլուխ Ժ

Ահա այսպես, կյանքը Հայոց աշխարհում դառել է միահեծան իշխանություն կարմիրների և երեսուն արծաթ սրանց գործիքների՝ ամենօրյա Գողգոթա մեր ժողովուրդի համար:

Ցավոք այսօրվա իրականությունն էլ է նմանատիպ հայեցակարգի վրա կազմված. մեծերն ու նրանց ենթականերն իշխում են թե՛ հոգով, թե՛ մտքով ավելի հարուստներին: “Երեսուն արծաթ գործիք” բնորոշումն ըստ ամենայնի վերաբերում է դավաճաններին ու երկերեսանիներին, ովքեր նույն ձևով են վարվում ու քծնում բոլորին՝ մտածելով միմիայն իրենց բարեկեցության մասին՝ անտեսելով ընդհանուր շահն ու սեփական արժանապատվության հարցը:

Միշտ էլ, երբ քաղաքական իրերի դժբախտ բերումով օտարն է իշխել Հայաստանում, համարձակ գլուխ է բարձրացրել մեր ժողովրդի տականքը՝

ազգորեն հերձվածողը, հոգով ստրուկը, տկարը, սեղմ ասած՝ ազգային ինքնագիտակցության և ինքնահարգանքի զգացումից զուրկ ցանցառության տարրերը:

Այո, նման անձնավորությունները, որոնք հեգնաբար գցված ու հեղինակազրկված են անձամբ կյանքի ու ճակատագրի կողմից, միայն դժվար ու օրհասական պահերին են հայտնվում՝ մոտալուտ վտանգից փրկելու փոխարեն այն ավելի մոտեցնելու ու խթանելու նպատակով: Արի հայորդիների կողքին նմանատիպ մարդիկ նույնպես տեղ են գրավում:

Մեկիկ-մեկիկ հայության սրտից և ուղեղից հեռացնել են փորձում այն ամենը, որի շնորհիվ միայն որպես ազգ նա կարողացել է դարերով դիմագրավ լինել իսլամ Արևելքի հայասպան փորձերին:

Ազգային զարթոնքն ապրելու համար անհրաժեշտ բաղադրիչները, այն է՝ վերադաստիարակումն ու ճշմարտության քարոզումը բացակայել են երկարուձիգ տարիներ՝ տարբեր օտարների լծի և իշխանության ներքո, որի հետևանքներն այսօր ակներև են: Այժմ էլ մարդիկ, Նժդեհի նշած պատճառով, չճանաչելով սեփական պետության անցյալը, բայց մշտապես խոսելով իրենից, ծաղրի առարկա են դարձնում թե՛ վերջինիս, և թե՛ իրենց:

Դասեր սույն գլխից.

1. Այսպես, հա՛յ երիտասարդ, երկրի սահմաններից դուրս որոշ տականքներ Հայաստանի ժողովրդի նկատմամբ կատարում են գրգռիչի դեր: *“Հետևաբար խոսքս ուղղում եմ հայակերպ գործիքներին”. . .*

“Առյուծածին մայրեր” - Գլուխ ԺԱ

Իրենց որդիներով պիտի ճանաչել և գնահատել կանանց: Անհայրենասեր ու անարի որդիների մայրը, անկախ իր հասարակական դիրքից, մեր կյանքում պիտի չվայելի հարգանք:

Անշուշտ, սա ևս կարևոր խոսք է ու կոչ, բայց հաշվի առնելով օրեցօր փոփոխվող աշխարհն ու նրա առաջնահերթությունները, պետք է նկատի ունենալ, որ ընկալումները մոր դերի մասին որոշ քաղաքակրթություններում աստիճանաբար մարում են՝ մնալով լոկ “ընտանիքի անդամի” կարգավիճակում: Բայց, իմ սուբյեկտիվ կարծիքով, տարբերություն չդնելով մեր ու մյուս երկրների միջև, պետք է արձանագրել, որ մեր դարավոր հաղթական պատմության շարժիչը եղել է խարսխված նաև մոր կերպարի վրա, որի հետ հաճախ կապվել են դաստիարակությունը, կորովն ու ռազմահայրենասիրությունը: Հետևապես, գոնե այս շրջանում, մոր նկատմամբ վերաբերմունքը պետք է լինի նույն ինչ անցյալում՝ որոշակի ոչ սկզբունքային փոփոխություններով: Պետք է փոխվի նահապետական մոտեցումը, այն է՝ “ավլող-թափող-եփող” տրամաբանությունն այլևս ակտուալ չպիտի լինի: Մայրերի հետ պիտի կապվեն զավակի մտավոր ներուժն ու կարողությունները: Մոր կերպարը պետք է դառնա երեխայի ներաշխարհը, բայց մինչ այդ որոշ կոպիտ ասած ինքնակոչ մայրեր պետք է ենթարկվեն վերադաստիարակության:

Մայրը միշտ էլ իր հոգուց մի բան տեղափոխում է իր զավակների կրծքի տակ:

Անվիճելի է: Իմ վերոնշյալ գրության տրամաբանական մեկնաբանությունը:

Թրքախոս հա՞յ, հայրենասե՞ր ... Ողորմելի, փափկամարմին, ծույլ հայրենասիրություն, որ իր մայրենի լեզուն յուրացնելու ճիգն իսկ չի փորձում: Անհեթեթություն: Լավ է համր, քան թրքախոս լինել:

Թրքախոս հայերը պատմական իրողությունների դասավորման պատճառով այսօր էլ մեծ թիվ են կազմում: Շատուշատերը և՛ պատանիների, և՛ երիտասարդների, և՛ տարեցների շրջանում բազմաթիվ օտարածին, մասնավորապես՝ ադրբեջանական ու թուրքական բառեր են օգտագործում՝ միևնույն ժամանակ հայերեն համարժեքները լսելուն պես ծաղրի են վերածում ու մի լավ ծիծաղում: Հետաքրքրական է, բայց հայության որոշ հատվածներ, քաջատեղյակ լինելով հայերեն բառերի մասին, միևնույնն է շարունակում են օգտագործել օտարածին աղավաղված բառերը՝ շրջապատին հաճոյանալու համար:

Այնուամենայնիվ, պետք է արձանագրենք, որ ունենք գեղեցիկ, ականջին հաճելի, ընդունում եմ՝ նաև դժվար լեզու, ու մեր պարտքն է ամեն կերպ պահել ու պահպանել այն ու հասանելի դարձնել իրենց հայ համարող բոլոր անձանց համար, այլ ոչ թե ամեն կերպ ստորացնել ու նվաստացնել՝ ուրիշներին իրենց լեզվի սահունությունն ու գեղեցկությունը ցույց տալու միտումով:

Դասեր սույն գլխից.

1. Նա միայն պիտի չողբա վերքերն իր Հայրենիքի, այլև մեր սերունդներին անսահման սեր ու պաշտամունք պիտ ներշնչի դեպ այդ վերքերը: Նա ավելի պիտի սիրի և հպարտանա, քան կարեկցի:
2. Հայրենապաշտորեն դաստիարակենք հայ կինը և նրան թողնենք մեր մատաղ սերնդի դաստիարակության գործը:
3. Հայ կնոջ միջոցով դարձի և զգաստության հրավիրենք հայության ազգայնորեն տկարացած տարրերը: Նրա պաշտպանության ու գուրգուրանքին հանձնենք մեր մայրենի լեզուն, Եռագույնը, անկախության Մայիսը՝ սրբությունները մեր ցեղի:

“Մի նախագիծ” - Գլուխ ԺԲ

Վաղվա Ռուսաստանի սարսափից խթանված՝ իրերի թելադրանքով նա վերստին պիտի նետվի Անդրկովկաս՝ օգտվելով երրորդ Ռուսաստանի ժամանակավոր, բայց անխուսափելի խռովահույզ վիճակից:

Թուրքական դիվանագիտության անբաժանելի մեխանիզմներից մեկն է, որը բնութագրում է Նժդեհը: Նույնիսկ հիմա՝ օրհասական նմանատիպ վիճակում, այդ տարրերը փորձում են որսալ պահը՝ երկու աթոռներին նստելու և բոլորին հաճոյանալու, եթե իհարկե արդեն չեն գտել: Եթե իրատես լինենք ու հարցը դիտարկենք պետական շահի ու սեփական երկրի հեղինակության բարձրացման տեսանկյունից, ապա այդ վարմունքը կարևոր է ու ճիշտ, բայց մարդասիրական տեսակետից՝ անտանելի ու անօրինական: Չնայած, երբ են ուշադրություն դարձրել մարդասիրությանը...

Սպասողական դրությունը ժողովուրդների կյանքում ժամանակավոր զինադադար է էապես, և ոչ թե զինաթափություն՝ ինչպիսին է մերը:

Միգուցեև այդպես է. շատուշատ պետություններ, ունենալով հնարավորություն դադարեցնելու և շունչ առնելու, առաջնորդվում են վերազինման ու վերականգնման միտումներով: Եվ երևի թե հայությունն այն եզակի ժողովուրդներից է, ում հանդեպ այս բանաձևն հակառակ էֆեկտն է ունենում: Ժամանակավոր հրադադարը միշտ էլ վերածնվելու է ու շարունակվելու: Մեր դեպքում յուրաքանչյուր պահն ու վայրկյանն էական են:

Խորապես գիտակցված չէ մեր անցյալը, ստեղծագործ չէ մեր ներկան:

Ճիշտ է ասված, բայց մի շարունակություն կա սրան. հայությունը սիրում է հիշատակել անցյալը, սակայն որոշ մասնիկներ ու հատվածներ, այն էլ՝ սուբյեկտիվ մեկնաբանությամբ ու ոչ պատկերի ամբողջությամբ: Ունենք անհրաժեշտություն դասեր քաղելու անցյալից՝ մտածելու ներկայիս դրության մասին և կառուցելու ապագան: Իսկ սրա թիվ մեկ խոչընդոտներից մեկը ոչ քննադատական, “քառակուսի” և “սխալ հայրենասիրական” մտածողությունն է:

Վաղվա ճակատամարտերի բախտը պիտ վճռի մարդկային հնարագետ միտքը և ոչ կենդանի ուժը:

Մարգարեությանը նման ճշմարիտ խոսքեր են, սակայն դրանք պարզ ու իրատես մտածողության, կշռադատության ու վերլուծության արդյունք են նաև՝ նման արագ փոփոխվող ու զարգացող աշխարհում: Նժդեհը խորհուրդ է տալիս կենտրոնանալ քիմիական ռազմարդյունաբերության վրա՝ անվտանգային մեխանիզմները կատարելագործելու համար, ու ընդգծում՝ թվաքանակն ու հեղինակությունն այլևս դեր չեն խաղում, միայն հնարագետ միտքն ու ստեղծագործականությունը:

Դասեր սույն գլխից.

1. Եթե դու, հա՛յ երիտասարդություն, պիտի շարունակես ապրել փոքրիկ հարցերի, փոքրիկ գործերի և նույնքան փոքրիկ օգուտների սպանիչ

մթնոլորտում, երբ կա մեր հավաքական գոյության սպառնացող մեծ վտանգը, եթե դու էլ՝ նման անցյալ սերունդների, պիտի շարունակես փորձել սովորական, փոքրիկ ճիգերով կամ արտաքին օգնության հույսերով լուծել մեր լինել - չլինելու ահավոր խնդիրը, գլխովին չկորչելու, ինչպես և մարդկության արգահատանքից մեկընդմիշտ ազատվելու խնդիրը, դու արդարացրած չես լինի ո՛չ քեզ, ո՛չ էլ քո ժողովրդի հույսերը:

2. Եթե ցանկության դեպքում դու պիտի չկարողանաս լինել ավելին, քան այն ինչ որ ես, այդ դեպքում վա՛յ և՛ քեզ, և՛ քո ժողովրդին:
3. Չէ, չէ, դու իրավունք չունես տկար լինելու, գոտելույծ վիճակում, երբեք, որովհետև քեզ պիտի վիճակվի վաղը վարելու հայության ճակատագիրը:
4. Դու պիտ լինես հզոր՝ հրաշագործելու աստիճան, որպիսին դառնալու համար իմաստությամբ օգտվել պիտի կարողանաս Գիտությունից և Դաստիարակությունից:
5. Դու բովանդակ ուժերդ գործի պիտ դնես՝ գլուխ հանելու մեր ժողովրդի կատարյալ հոգեբանական և տեխնիկական սպառազինությունը:

“Բախտորոշ մտավորականություն” - Գլուխ ԺԳ

Մի ժողովուրդ, որ իր ղեկավար տարրերի կողմից համարվում է «փափկամարմին» կենդանիների տեսակից, երբեք չի լինի հաղթական ու հարգված:

Ըստ Նժդեհի՝ եթե ինչ-որ երկրի ղեկավար մարմինները (նույնիսկ ուղղակի մարդկային հարաբերություններում) ժողովրդին կոչում ու որակում են իբրև ամբոխ՝ լուռ ենթարկվող ու ստրկեցվող, ապա այդպես են ընկալելու թե՛ իրենք՝ մարդիկ, թե՛ արտաքին դերակատարները: Պարզ է, որ որոշակի դեպքերում նման մոտեցումները ձեռնտու են ու պետքական, բայց այսուհանդերձ պետություն ունենալու համար պետք է բարձրացնել մարդկանց արժանապատվությունն ու ինքնագնահատականը՝ դրական իմաստով, որպեսզի մարդիկ ճանաչեն իրենց, հասկանան, որ միայն մաշկ ու արյուն չեն, այլ ստեղծագործ միտք, կենդանի ուժ, կարեկից ու բախտակից: Մարդկանց պետք

է հիշեցնել, որ իրենք մարդ են, ու թե ինչ պատիվ է մարդ ծնվելը: Ինչքան բան պետք է դեռ փոխել. . .

Զուրկ ապագայի զգացումից, ինչպես և ազգային բարոյականից, նա առանց մի հատիկ իսկ հարված փոխանակելու փորձի թշնամուն հանձնեց իր դիրքերը, որին այնքա՛ն մեծացրել էր տկարի իր երկչոտ երևակայությունը:

Լինում են դեպքեր, երբ մենք ինքներս ենք երևակայում անհնարինը կամ բազմապատիկ անգամ չափազանցվածն ու գերագնահատվածը մեր պատկերացրածից: Ու դա երբևէ դրական ազդեցություն չի ունեցել: Համաձայն եմ նաև, որ հակառակորդին թերագնահատել որևէ դեպքում չի կարելի, պետք է դրսևորել ծայրագույն հարգանք, նույնիսկ ինչ-որ բաներ նրանից սովորել: Պարզապես պետք է լինել իրատես ու պատրաստված՝ հանկարծակի հարվածներից չզարմանալու ու արժանի հակահարված տալու համար:

Գիտեմ, զգում եմ և այն, որ հետայսու իմ գործը պիտ լինի ծեծվել եվրոպական ուժերից և ծեծել հայությունը, ծեծել ձեզ՝ վերջնականորեն պարտվածի սպանիչ հոգեբանությունից զերծ մնալու համար:

Հեղինակը նկարագրում է թուրքական վարվելակերպն այլ ժողովուրդների հանդեպ ծայրահեղ վիճակներում: Դա ևս ինչ-որ կերպ նման է միջանձնային հարաբերություններին, երբ մարդը չի կարողանում ինքնահաստատվել ավելի բարձր շրջանակներում, և որպեսզի վրեժն առնի, հայացքը թեքում է ավելի թույլերի վրա /այս դեպքում՝ անձնապես, հոգով թույլ/: Բայց պետք չէ քաղաքականության մեջ հույզեր մտցնել:

Միջազգային բարոյակա՞նը: Բայց այդ երբվանի՞ց է, որ գոյություն ունի դա:

Շահերը միշտ գերադասելու են, հետևապես մարդկայնությունն ու միջազգային բարոյականը ստվերում են մնալու: Դրանք հիմա արտացոլված են պարզ հումանիտար օգնություններով ու բարձրաձայն կոչերով, բայց ոչ արդյունավետ գործողություններով: Նժդեհն էլ էր հասկացել, որ դա պարզապես կա, բայց չի գործում: Իրականությունը չի փոխվել:

Մեր ներումը կշարժեր աշխարհի նողկանքը միայն: Ներելով, մենք հաստատած կլինեինք, թե մենք արժանի էինք այն ամենին, ինչ որ ապրեցրեց մեզ թրքությունը: Ապացուցած կլինեինք և այն, թե իսկապես անկախության անարժան հավաքականություն ենք՝ գոհ մեր վիճակից:

Որոշ չափով համաձայն եմ, քանզի արտաքին դերակատարներն ուժեղ ժողովուրդներ են սիրում և ընդունում: Եթե հայությունն իսկապես մոռանար իր սրբազան պարտքը՝ հավերժ հիշելու Հայոց Ցեղասպանության զոհերի հիշատակն ու դատապարտելու, ապա աշխարհն այլ հայացքով կդիտեր մեզ: Բայց, եթե դիտենք մյուս տեսանկյունից, ինչպես որ Հոլոքոստն ընդունվեց Գերմանիայի կողմից և փոխհատուցվեց, նույն ձև էլ Թուրքիան պետք է ընդուներ, ճանաչեր և ներողություն խնդրեր՝ զարգացման ու ոտքի կանգնման հույս տալով հայ ժողովրդին ու հայկական պետությանը: Սակայն այդպիսի բան տեղի չունեցավ. քաղաքական շահերի խնդիր էր և՛ առաջ, և՛ հիմա: Բայց, պետք է արձանագրել, որ միջազգային հանրության լայն շրջանակներ այսօր լավ իրազեկված են Մեծ Եղեռնի մասին, պետությունը, և հատկապես՝ ժողովուրդը ջանացել է, որպեսզի աշխարհի մեծաթիվ երկրներ ճանաչեն Ցեղասպանությունը: Այժմ, աշխարհի մեծագույն մասը ճանաչում և դատապարտում է պետական մակարդակով:

Հայ մտավորականությունը իր ամբողջության մեջ պիտ ազատվի ստրկական և սարսափի հոգեբանությունից:

Այո, բարեփոխումը ևս ճիշտ ու օգտակար կլինի, քանզի մենք ունենք պակաս որակյալ գրականության, մարդկային դաստիարակման ու մոտեցման: Եթե պետությունը լուծում է արտաքին մարտահրավերներն ու խնդիրները, ապա մտավորականությունը ներքին մարդկային խնդիրների լուծողն է ու լուծում ցույց տվողը: Պետք է թողարկել այնպիսի գրականություն, որը կհամապատասխանի մեր կարիքներին ու պահանջներին, բայց կարևորը՝ մեր մասին: Կարծում եմ՝ մտավորականության ոլորտը զարգացնելով, կբարձրանա թե՛ ազգի արժանապատվությունն ու ճանաչողությունն ամբողջ աշխարհում, թե՛ պետության գնահատականը: Այս հարցին ևս պետք է մեծագույն ուշադրություն դարձնել: Մտավորականությունը միայն գրականությամբ չի սահմանափակվում:

«Օտար լուծերից ո՞րն է տանելին, ցանկալին», ահա՛ հարցը, որով նա զբաղեցրել է հայությունը: Օտար տիրապետության դեմ անողոք պայքար կազմակերպելու և վարելու փոխարեն՝ նա առաջարկում է իր ժողովրդին ընտրել այս կամ այն օտար լուծը:

Այսօր էլ այս բանավեճը գոյություն ունի: Հասարակության որոշ տարրեր պետք է գիտակցեն, որ այն ինչ անցյալում է, անցյալում էլ մնալու է, պարտավոր ենք նայել դեպի ապագա և մտածել մեր պետության գոյության ու ամրապնդման մասին: Անկախ քաղաքական հարցերից ու օրակարգերից՝ ժողովուրդը նախ պետք է գիտակցի, որ ստրկամիտ մտածողությունը վատթարագույնն է բոլորի մեջ և կործանարարը, հետևաբար պետք է ընդունի, որ այսուհետ նա անկախ է և ինքն է որոշում իր ապագան:

Դասեր սույն գլխից.

1. Ներե՞լ եք ուզում, արիացե՛ք, հզորացե՛ք, հաղթե՛ք նախ:
2. Գիտակցենք վերջապես, որ ժողովուրդների բախտավորության և անբախտության, հզորության և տկարության աղբյուրը գտնվում է իրենց մեջ:
3. Սթափվի՛ր, հա՛յ մարդ, ուշքի՛ եկ, քանի դեռ ուշ չէ, այլապես մարդկությունը, որ դեռ սպասում է քո սրբազան խենթության, մի օր հուսախաբ պիտ թքի մեր ժողովրդի անունին:
4. Ուժը չի պակասում քեզ, այլ՝ ուժեղ լինելու կամքը:
5. Գարշի՛ր, գարշի՛ր թուլությունից և պիտ ուզենաս լինել, և պիտ լինես ուժեղ:
6. Միամտորեն չպահանջենք, որ աշխարհը լինի այն, ինչպես որ մենք ենք ուզում, այլ ազգովին մենք դառնանք այն, ինչպիսին լինել դա է թելադրում:
7. Եղի՛ր ավելի բարձր էակ, քան մարդը:

Ամփոփում

Այսպիսով, ինչպես հասկանում ենք “Որդիների պայքարը հայրերի դեմ” երկը լիովին մեր ու մեր վիճակի մասին է: Փորձեցի թափանցիկ, հեշտընկալելի կերպով բացատրել Նժդեհի՝ մեծատառով ՀԱՅ-ի ասածը: Բայց բացի բացատրելուց, մեզ մնում է նաև հասկանալ և փոխվել:

Հետաքրքրական է, թե ինչպե՞ս է ստացվում, որ նախորդ դարում գրված այս վերլուծություն-նկարագիրն այսօր էլ է բնորոշում մեզ: Պատասխանն ակնհայտ է. քանզի փոփոխություն չկա, մարդիկ չեն փոխվել, մտածելակերպն էլ մնացել է նույնը, նույնիսկ ավելի է վատացել: Այս ծավալուն վերլուծությունն ավարտենք Նժդեհի կարևորագույն խոսք-կոչերից մեկով՝ *պիտի՞ դառնաս մեր դյուցազնախառն սերունդը, ցանկության դեպքում՝ ԱՅՈ:*

© Դավիթ Մուրադյան 30.03.2025